ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

0090, ք.Երևան, Շոպրոնի 77

N 01/6853 «28» 04 2022թ.

Գառնիկ Մկրտումյանին
Հասցե՝ ք.Երևան Ն.Զարյան փողոց 74Բշ. 89 բնակ

ՈՒղարկում եմ Ձեր դիմումի հիման վրա ՀՀ ոստիկանության պարեկային ծառայության իրավաբանական բաժանմունքում իրականացված վարչական բողոքարկման վարույթի արդյունքում թիվ 8180121847 վարչական ակտը բեկանելու և վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը կարճելու մասին որոշումը:

Առդիր՝ «2» թերթ:

Պետի տեղակալ,
ոստիկանության գնդապետ՝ Ա.Մաթևոսյան

Կատ. Ն. Քոչարյան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ոստիկանության պարեկային ծառայության վարչական իրավախախտման վերաբերյալ գործով 31.03.2022թ-ին կայացված թիվ 8180121847 որոշումը բեկանելու և վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը կարճելու մասին

<< 27 >>__04__2022թ. ք.Երևան

ՀՀ ոստիկանութան պարեկային ծառայության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Ա.Մաթևոսյանս, վերանայելով Գառնիկ Մկրտումյանի (Այսուհետ՝ դիմող) 01.04.2022թ. դիմումի հիման վրա հարուցված վարչական բողոքարկման վարույթի նյութերը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

31.03.2022թ.-ին՝ ժամը 04:00-ին, Երևան քաղաքի Տերյան փողոցում քաղաքացի Գառնիկ Մկրտումյանի վարած «ՄԵՐՍԵԴԵՍ-ԲԵՆՑ» մակնիշի 86 WW 001 հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցի տեխնիկական վիճակի զննություն անցած չլինելու փաստը արտացոլվել է ՃՈ էլեկտրոնային ռեգիստրում (իրավական հիմք՝ ՀՀ կառավարության թիվ 1251-Ն որոշում), ինչի հետևանքով ՀՀ ոստիկանության պարեկային ծառայության Երևան քաղաքի գնդի 4-րդ գումարտակի 1-ին վաշտի պարեկ Տիգրան Թադևոսյանի կողմից վարորդի նկատմամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 123.4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն կայացվել է թիվ 8180121847 որոշումը՝ վերջինիս 20.000 ՀՀ դրամի չափով տուգանելու մասին:

04.04.2022թ.-ին ՀՀ ոստիկանության պարեկային ծառայություն ստացված դիմումով Գառնիկ Մկրտումյանը խնդրել է անվավեր ճանաչել ՀՀ ոստիկանության պարեկային ծառայության վարչական իրավախախտման վերաբերյալ գործով 31.03.2022թ. կայացված 8180121847 որոշումը՝ նշելով, որ տրանսպորտային միջոցի թաղարկման տարեթիվը 2021 է, իսկ համաձայն ՃԵԱԱ մասին ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետի՝ տրանսպորտային միջոցների առաջին տեխնիկական զննությունն իրականացվում է թողարկմանը հաջորդող չորրորդ տարում:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ վարչական իրավախախտման վերաբերյալ գործով 31.03.2022թ. կայացված թիվ 8180121847 որոշումը ենթակա է բեկանման հետևյալ պատճառաբանությամբ.

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 123.4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ օրենսդրությամբ սահմանված կարգով տեխնիկական զննություն չանցած կամ տեխնիկական զննությամբ ի հայտ եկած՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած՝ տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքություններից կամ պայմաններից որևէ մեկի առկայությամբ տրանսպորտային միջոց վարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում սեփականատիրոջ կամ տիրապետողի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով:

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում շահագործվող տրանսպորտային միջոցները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա են տեխնիկական զննության:

Քաղաքացու դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի շրջանակում հավաքված փաստերի և ապացույցների հիման վրա պարզվել է, որ դիմողի վարած «ՄԵՐՍԵԴԵՍ-ԲԵՆՑ» մակնիշի 86 WW 001 հաշվառման համարանիշի ավտոմոբիլը 2021 թվականի արտադրության է, իսկ ՃԵԱԱ մասին ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ տրանսպորտային միջոցների առաջին տեխնիկական զննությունն իրականացվում է թողարկմանը հաջորդող չորրորդ տարում:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի <<Ա>> կետի համաձայն՝ անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝ օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման՝ վարչական իրավախախտման դեպքի կամ կազմի բացակայության հանգամանքների առկայության դեպքում:

Այսպիսով, դիմումատուի արարքում բացակայում է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 123.4-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված վարչական իրավախախտման դեպքը, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով նույն օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 293-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. ՀՀ ոստիկանության պարեկային ծառայության վարչական իրավախախտման վերաբերյալ գործով 31.03.2022թ. կայացված թիվ 8180121847 որոշումը բեկանել և վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը կարճել:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
3. Սույն որոշման օրինակն ուղարկել դիմողին և ՀՀ ոստիկանության պարեկային ծառայության Երևան քաղաքի գունդ:

Պետի տեղակալ,
ոստիկանության գնդապետ՝ Ա.Մաթևոսյան